ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբեր, 2019 թվականի № 45-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՐՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ ու 84-րդ հոդվածների և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության կողմից ներկայացված ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման նախահաշվի փոփոխությունը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Հիմք ընդունելով սույն որոշման 1-ին կետի իրականացումից բխող, ինչպես նաև Ընկերության ընթացիկ գործունեության հետ կապված այլ դրամական մուտքերն ու ելքերը և եկամուտներն ու ծախսերը՝ հաստատել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018թ. դեկտեմբերի 28-ի № 49-Լ որոշմամբ հաստատված Ընկերության եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի, եկամուտների և ծախսերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 3 և դրամական հոսքերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածի:

3. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

11 սեպտեմբեր, 2019 թվականի

ք. Երևան